ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ավագանու նիստերի և համայնքային նշանակության այլ միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսներ, հանրային քննարկումներ) առցանց հեռարձակումների վերաբերյալ

Հ/Հ	Համայնք	Միջոցառում	Օրը	Ժամը	Վայրը
1	Սպիտակ	Սպիտակ համայնքի ավագանու արտահերթ նիստ	29.04.2021թ	12:30	Սպիտակի համայնքապետարանի նիստերի դահլիճում ք. Սպիտակ Շահումյան 7

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Կատ. Ա. Գյուլազյան

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 29-ի արտահերթ նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2020 թվականի Արցախյան պատերազմում զոհվածների հուշահամալիրի կառուցման աշխատանքների ձեռքբերումը անհետաձգելի համարելու և մեկ անձից գնում կատարելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Գ. Սահակյան/

2. Սամբոյի Եվրոպայի պատանիների, երիտասարդների և մեծահասակների առաջնությանը Սպիտակ համայնքի մարզիկ Արթուր Գագիկի Հարությունյանի մասնակցությունը ապահովելու համար դրամական օգնություն տրամադրելուն համաձայնություն տալու մասին

/Զեկուցող՝ Հ. Միրզոյան/

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությամբ, հաշվի առնելով, որ գնման այլ ձևերի կիրառմամբ 2020 թվականի Արցախյան պատերազմում զոհվածների հուշահամալիրի կառուցման աշխատանքները մինչև 2021 թվականի սեպտեմբերի 27-ը՝ 2020 թվականի Արցախյան պատերազմի տարելիցը, ավարտին չեն հասցվի և ընդառաջ գնալով զոհվածների հարազատների խնդրանքին՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. 2020 թվականի Արցախյան պատերազմում զոհվածների հուշահամալիրի կառուցման աշխատանքների ձեռքբերումը համարել անհետաձգելի:

2. Համաձայնություն տալ սույն որոշման 1-ին կետում նշված աշխատանքների ձեռքբերման համար մեկ անձից գնում կատարելու:

ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՍԱՄԲՈՅԻ ԵՎՐՈՊԱՅԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԵՎ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԻԿ ԱՐԹՈՒՐ ԳԱԳԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝ հիմք ընդունելով Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի 2021 թվականի ապրիլի 20-ի թիվ 68 գրությունը և Սպիտակ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ 2021 թվականի մայիսի 24-30-ը Կիպրոսի Լիմասոլ քաղաքում կայանալիք սամբոյի Եվրոպայի պատանիների, երիտասարդների և մեծահասակների առաջնությանը Հայաստանի Հանրապետության հավաքականի անդամ, Սպիտակ համայնքի մարզիկ Արթուր Գագիկի Հարությունյանի մասնակցությունն ապահովելու համար Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Սպորտային միջոցառումներ» գործառական դասակարգման «Ներկայացուցչական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման 4237 հոդվածով նախատեսված միջոցներից հատկացնել 336 000 ՀՀ դրամ՝ որպես ճանապարհածախս: